Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format
Adapt — remix, transform, and build upon the material

№ .....

№ 5122

Նուէր Ս. Ամենափրկչեան Վանաց
Գրադարանին
Ի յիշատակ հանգուցեալ
Գալստան Մ. Միքայէլեանի
Նոր-Ջուղա, 1966 թ.

5122

ON LYING.

5722 ձեռագիր
Յովհաննէս Ս. Ոսկեբերանի

ՅՈՐԴՈՐՄՈՒՆՔ

ՍՈՒՏ ԱՍՕԳ ՄԱՐԴԿԱՆՑ ՀԱՄԱՐ

Ս. ՆԵՐՍԷՍ ՇՆՈՐՀԱԼԻ
ԳՐԱԴԱՐԱՆ

Ս. Ամենափրկիչ Վանք
Նոր Ջուղա

Թարգմանութիւն

Ս. Ամենափրկիչ Վանք
Նոր-Ջուղա

Առաջին անգամ տպեալ Յամի Տեառն 1833

Ի ՀՈՒՀԻ

Գրատպատան

Ս. Ամենափրկիչ Վանացն

Նոր-Ջուղայ

Ընդէն տպեալ ի Տպարանի Մկրտոյ Մխոնարեցոյ ի Կալկաթայ

Վանն Ամերիկու, հաւատով Տէտրակներու ժողովքին

1841.

նորա հակառակըն էի ասեն: Բայց Աստուած հրաման տուաւ մեզ որ ոչ թէ ճըշմարտուբ ճանապարհի ղրաղոփն, բայց միջումն գնանք. և էն ամէն գործքերըն, որ հակառակ են սրան՝ ոչ միայ կէնակ էն վերև յիշած օրինակոփն, բայց էլ ուրիշ շատ օրինակներով խիստ սաստկութենով և խիստ արդարութենով պատժեց: 4. Թա. 5.24—27:

Մարդիք կան՝ որ ասումեն թէ, սուտ ասելն ինպատ հարկաւոր է* իրանց գործքերին և առուտուրին համար և թէ առանց սուտ ասելոյ իրանց բոլոր ընտանիքն սովով պիտի մեռնեն: Էսպէսի մարդիքն Թոմ մաքներն բերեն էն, որ էն Աստուածըն՝ որ սաստիկ հրաման է տալիս մեզ որ միշտ ճշմարտութիւն խօսենք հենց էն հրամանըն ոչ միայն իրան փառքին համար տուաւ, բայց էլ մեր յաւուկ երանութեան համար. և շատ առատ խոստմունքներ է տալիս նորանց որ իրանց բոլոր յոյսըն միայն նորա վերայ են դնում: Ցայտնի՛ր քո ճանապարհըդ Տէրի առաջին և քո յոյսըդ միայն նորա վերայ դի՛ր. և նա էն կանէ: Սաղ. լէ. 5: Ձեր երկնաւոր Հայրն գիտումէ՝ թէ ձեզ ամէնդ պէտք է ձեզ: Առաջ Աստուծոյ Արքայութիւնըն և նորա արդարութիւնըն խնդրեցի՛ք և ձեզ ամէնդ կաւելնայ ձեզ: Մատթ. է. 32. 33: 3. Թա. 17.13—16: Աստուածպաշտութիւնն ամէն բանի համար օգուտ ունի, և հիմի կվան և նոր գալու կենաց աւետիքըն ունի: ա. Տիմ. դ. 8: Ո՛վ որ իրան լեզուի սուտ խօսելոփն գանձ (խոպնայ) է հաւաքում նա փուչ բաների ետևէն է գնում և մահու թակնեերի մէջն է ընկնում †: Առակ. իա. 6:

Շատ մարդիք կան որ ուզումեն իրանց անձնեերըն արդարացնել ասելով, թէ իսկի մին ժամանակ իրանց սուտ ասելոփն ուրիշներին վնաս չեն հասցնում ‡. բայց նորանց էս պատճառանքս իսկի չի կարող ճշմարիտ Աստուծոյ Տիւանի առաջին օգուտ տալ նորանց. պատճառն որ՝ ամէն ով որ մին յայտնի և հաստատ օրէնքն գանդումէ՝ նա Օրէնք տուօղի իմաստութեին անարգումէ և նորանից չարախօսումէ, և սրա համար սուտ խօսօղն առանց ներելոյ պատիժ պէտք է քաշէ, թէ և նորա սուտութիւնըն խաղանելոյ համար ասած լինի. ինչու որ՝ մեր Տէրն ասումէ, թէ ամէն դատարկ բանի համար՝ որ մարդիք կըխօսեն, պատասխան պիտի տան դատաստանի օրումն. ինչու որ՝ քո խօսքերիցդ կըարդարանաս և քո խօսքերիցդ կըդատապարտվիս: Մատ. 12.36.37:

Ուրեմն արժան է մեզ որ էսպէսի սովորութենից փախչենք: Պատճառըն որ՝ էս մեղքիս համար էնպէս է, ինչպէս որ ամէն ուրիշներին համար. նորանց սկիզբն պզտիկ և թեթև է երևում.

---

* Էս պէտքն ինձ ոմանք պէս նոմայ ինչ ասան ասել. Կէտէս Շնորհալին ինչ ասէլ:

† Էս պէտքն ինձ ոմանց պէս նոմայ. 2. ատ-պատանին ինչ էլավ:

‡ Ոմպէս որ Շատ ինչն ասողնէն ինչ հասէն:

բայց երբ որ հենց մին անգամ կատարվածը է, ապա ամեն օր զօրանում · և թէ որ Աստուծոյ ընորհքովն չը խափանվի, վերջն իսպառ մեր հոգոյ կորուստըն կըգործէ ։

Բայց էս բանս հնքան ծանր չէր լինիլ, թէ որ մենակ նորանք սուտ ասէին, որ ուրիշ բաները չեն ուզում բայց մենակ էս չար Աշխարհքիս բարիքներըն, բայց վայ մեր խեղճութեանն · հենց նորանք էլ որ ճշմարիտ Քրիստոնեայ են անուանվում շատ հեշտ են ընկնում էս մեղքիս մէջ · ինչու որ շատ հեշտ է պատահում որ ընորհակալութեան կամ բարեկամութեան խիստ զօրեղ խօսքեր գործածեն, որտեղ որ կամենում են մենակ պարզ և հասարակ ընորհակալութիւն կամ քաղաքավարութիւն յայտնել ։ Եւ կամ անհաստատ պատճառներ և երկմիտ պատասխաններ են չինում որ մին սխալմունք կամ մտքի անզգուշութիւնըն ծածկեն, կամ թէ կեղծաւորութենով ջանք են անում, որ իրանց Աշխարհական բարեկամներէն առաջին հաւատացեալ և Աստուածապաշտ չի երևին ։ Էսպէսի վարքով և սովորութենով նորանք պատճառ են տալիս ճշմարիտ Քրիստոնէութեան և Աստուածպաշտութեան թշնամիքներին՝ որ Քրիստոսի Սուրբ Վարդապետութիւնըն հայհոյեն և անարգեն · ինչու որ՝ նորանք գայթագղվում են երբ որ էն մարդկանց անպատշաճ և անհաստատ կենցաղավարութիւնըն տեսնում են որ իրանց էն Սուրբ Յիսուսին հետևօղ են ասում · որ նորա բերանումն իսկի մին խաբէութիւն կամ ստութիւն չըգտավա, և որ հենց ինքն յատուկ ճշմարտութիւն է ասվում ։ Յօհ · ժդ · 6։1 · պէտ · 2.22—25։

Թէ որ կամենանք ամեն բանի մէջ ճշմարտութիւնըն պահել, պէտք է որ մեր մտքում հաստատ իմանանք և հաւատանք որ իսկի մին վիճակ և իսկի մին բան կարօղ չէ մին ստութիւն ներելի չինել ։ Պէտք է որ մեր անձներըս վարժենք և սովորցընենք չափաւորութենով և պարկեշտութենով խօսելոյ համար՝ և փախչենք էն ամեն խօսքերիցն որ ստութեան նման են · 1·Թես· 5. 22։ Մին քանի մարդիք միշտ ջանք են անում որ մին երևելի բան խօսեն և ամեն բանի համար՝ որ խօսումեն՝ շատ լաւ իմացօղ երևին · և սրա համար իրանց ամեն խօսքերըն շատ համարձակութենով հաստատումեն որ ճշմարիտ լինին բայց նորանք որ էսպէսի համարձակութենով և վճիռ կարելով տալակուսելի բան են առաջ բերում և իբր ճշմարիտ հաստատում · ցոյց են տալիս, թէ սուտ ասելոյ համար խղճմտանքի էն զգուշութիւնըն և էս սուրբ վախըն չունին, որ Քրիստոնեան սուտ ասելուց պէտք է ունենայ ։ Ուրիշ մարդիք կան որ միշտ ջանք են անում որ նոր և զարմանալի բաներ պատմելով ականջ դնօղներին զարմացնեն · և իրանց սրտի ունայնութենովն էս նրա համար են անում, որ լսօղ մարդկանցից պատիւ ստանան ։ Էս մեղաւոր ցանկութիւնս նմանապէս շատ հեշտ մարդոյ միտքն խաբումէ և սուտ խօսելոյ մէջ է տանում ·

որ Էսպէսի բաներ ասէ՝ որ ոչ ճշմարիտ և ոչ հաւատալի են: Կան էլ մարդիք՝ որ մին հասարակ բանի համար խօսելով միշտ շատ զօրեղ և մեծացնօղ խօսքեր են գործածում, ինչպէս՝ որ շատ ահաւոր, զարմանալի, աննման, և Աստուածային բան է: Էսպէսի խօսքերով նորանք առ հասարակ ճշմարտութեան ճանապարհից և սահմանից դուրս են գալիս, և վերջապէս ծաղր և նախատինք են լինում ամէն խաստուն և խելացի մարդոյ աչքի առաջին:

Պէտք է որ ճշմարտութիւնըն ոչ միշտ մէնակ են ժամանակն պահենք, երբ որ մին բան ենք պատմում, բայց էն ժամանակն էլ՝ երբ որ մարդկանց վարքի համար պատմութենք կամ մեր միտքըն յայտնութենք՝ թող ճշմարտութեան Օրէնքըն կատարենք: Ընկերի սէրն առ հասարակ պահանջում մեզանից՝ որ երբ որ մենք մարդու մեղաց կամ տկարութեանց համար խօսութենք, ոչքան որ կարելի է շատ հեզ և քաղցր խօսքեր գործածենք, և մին քանի ժամանակ էլ պէտք է որ Էսպէսի բաներուի համար խոպառ սուս կենանք, բայց ոչ սիրոյ և ոչ բարեկամութեան պատճառանք կարող չեն արդարացնել մեզ՝ որ մին մարդոյ մեղքըն ծածկելոյ համար սուտ ասենք: Էլ երբ որ մին մարդոյ պայծառ առաքինութեան համար խօսենք, կամ նորա քաղցր քաղաքավարութիւնըն կամենանք ցոյց տալ՝ թող ճշմարտութենից դուրս իսկի բան չասենք: Ինչու որ՝ թէ և մին անձին շատ անչափ գովասանք տալոյ և կեղծաւոր քաղցրութիւն ցոյց տալոյ մեղքն գովելի է երևում էն մարդկանց միջումն, որ Աշխարհքի և մարդոյ մտքին պէս են վարվում, բայց Աստուծոյ առաջին ամէն մէկ սուտ խօսք և ամէն մէկ կեղծաւորութիւն ճշմարիտ և ուղիղ մտքին պէս կըդատվին: Նմանապէս շատ զգուշութենով պէտք է մտիկ տանք՝ թէ ինչպէս պատմենք էն բանըն, որ ուրիշ մարդուց լսել ենք. որ առանց միտք առնելոյ ուրիշ բան չաւելացնենք նորա վերայ. պատճառն որ՝ Էսպէսի սովորութիւնն շատ անգամ շատ վնաս է տալիս և չար պտուղ է բերում, մանաւանդ երբ որ մեր ընկերների և բարեկամների անունին վերայ մին բան պատմվում է:

Եթէ կամենանք ճշմարտութիւնն պահել՝ էն էլ պէտք է՝ որ մեր ցանկութիւնների սաստկութենից զգոյշ կենանք. պատճառն որ՝ շատ հեշտ կըպատահի որ թէ բարկութիւնն և թէ ուրիշ ցանկութիւնները մեզ ճըշմարտութեան սահմանից և օրէնքից դուրս քցեն և մեզ շարժեն. որ լեզուով աւելորդ բան և խօսք ասենք. և հենց մեր յատուկ մտքին հակառակ խօսենք:

Սրա վերայ էլ պէտք է որ էրմռանանք, թէ ստութիւնն մեզ ո՞ւմ է նմանացնում. ինչու որ՝ Տէրն ասում է՝ թէ դուք ձեր սատանայ հօրից էք, և կամենում էք ձեր հօր ցանկութիւնըն անել: Նա ճշմարտութեան մէջ չըմնաց. պատճառն որ՝ ճշմարտութիւն չըկայ նորանում: Երբ որ սուտ խօսի, հենց իրան բաներից է խօսում. ինչու որ սուտ

է և նորա (սուտ Թեան) հայր : Յօհ • Ը • 44։ Նա մեր առաջին ձնօղքին մարդասպանէր , և սուտ ասելով հաւատացրուց նորանց , Թէ Աստուած ճըշմարիտն չի ասաց • և Թէ նա մեղքըն կենքան սաստկու- Թենով չի պատժել՝ որքան ան էր տուել իրան խօսքովն • և հենց էսպէս նա մինչև էս օր էլ գործումն և միշտ ջանք է անում որ հաւատացնէ էն ամէնին , որ Աստուծոյ վախըն իրանց սրտերումն չունին :

Էս մեղքս նորանցից մինն է որ շատ կանուխ բռնանումեն էն մեղաւոր ապականութենից՝ որ մենք ամէնքս Ադամից ժառանգու- մենք • պատճառն որ՝ երեխաներն երբ որ սկսումեն խօսել , շուտով ծռվումեն և սուտ են խօսում : Պաղմ • ճԸ • 4։ Եւ երբ որ էս կեանքիս միջումն առաջանան և մեծանան • ապա էս մեղքս էլ զօրա- նումէ , և սովորութիւն է լինում , եթէ ոչ Տէրն իրան անսահման սիրովն լոյս ծագէ նորանց սրտերի մէջըն և Սուրբ Հոգոյ զօրութենովն նոր ծնէ նորանց ճշմարտութեանն հնազանդ լինելոյ համար : Պատճա- ռըն որ՝ մէնակ նա է զօրեղ և կարօղ՝ որ Թէ էս մեղքից և Թէ էն մեղքից բժշկէ և ազատէ : Նա է ճշմարտութեան Հոգին Յօհ • 14• 17։15•26։ և նորա յատուկ գործն է՝ որ մեզ ամէնն ճշմարտութեան մէջ առաջնորդէ Յօհ • 16 • 13։ Եւ Տէր Աստուածն խոստանումէ նորան իբր ընծայ տալ էն ամէնին , որ դէպի ինքն կըկանչէ : Ղու• 11 • 13։ Եւ ձեզ նոր սիրտ կըտամ և ձեզանում նոր հոգի կընորգեմ • և էնպէս կանեմ ձեզ , որ իմ արդարութեան մէջ գընաք , և իմ իրաւունքներըն պահէք և նորանց անէք • և դուք ինձ ժողովուրդ կըլինիք • և ես ձեզ Աստուած կըլինեմ : Եզէկ : ԼԸ • 26—28։

Երբ որ մարդոյ սիրտն էսպէս նորոգված լինի , էն ժամանակն մարդըն կըտեսնէ ճշմարտութեան բարձրութիւնըն և ազնուու- թիւնըն , ինչպէս առաջ իսկի չէր ճանաչում • և էն ժամանակն նա ճշմարտութիւնըն կըսիրէ ամէնն կողմանէ : Սուրբ Գիրքըն , որ ճշմարտութեան խօսք է • նորա հոգոյ համար ուրախութիւն և մխի- թարութիւն կը լինի • և որովհետև Տէրի Օրէնքն ճշմարտութիւն է • նա իրան սիրտըն և գործքերըն կըքննէ էն Օրէնքի պատուիրանքնե- րին պէս , և կըտեսնէ իրան անօրէնութիւններըն և պղծութիւններըն և իրան անձըն կատէ • նա որ սրանց առաջ ինքն իրան արդար էր համարում : Ապա ճշմարտութիւնըն կըճանաչէ • և ճշմարտութիւնն կազատէ նորան • Յօհ • Ը • 32։ * մեղքի ծառայութենից • ինչու որ՝ կարօղութիւն կընդունի որ հաւատայ Աստուծոյ էն վկայութեանն , որ իրան որդոյ համար վկայեց , որ մեր մարդկային բնութիւնըն իրան վերայ առաւ , և երբ որ մենք անէծքի և դատապարտութեան տակն էինք , ինքն խաչի վերայ մեռաւ , որ մեղքըն դէն քցէ իրան անձին պատարագովն• Եբ• Թ• 26։1•Պետ•2•24•25։ Տէրն ճշմարտութենով սըրբումէ հաւատացեալ մարդոյն , որ նա նմանվի իրան Աստուծոյն և Ստեղծողին : Ապա ինչպես որ Տէրն ճշմարտութիւն է ուզում•

Էնպէս էլ նորոգված մարդն բոլոր սրտով ցանկանում ճշմարտութեանն և նորանով ուրախանում. նա սիրում ճշմարտութեան ճանապարհըն և ճշմարտութեան օրէնքն նորա բերանումն է։

Նա Տէրի ետևէն է գնում, խաղաղութենով և արդարութենով և նորա ճշմարտութենովն իրան ամէն հոգևոր թշնամիներից պահպանվում. և թէ և սատանայի ես Աշխարհքիս փորձութենովն և ներգործութենովն մին քանի ժամանակ վէր ընկնի, բայց իրան մեղքերին համար էլ շուտով զղջանում. ատում նորանց, և անկեղծ կամքով ուզում որ ամէն չարութիւնըն թողէ. և որովհետև էօր մօտ բարեխօս ունի, Յիսուս Քրիստոսին, էն արդարին Եբր. 7. 25։ 1. Յովհ. 2.1։ նա Աստուծոյ աթոռին մօտենում էն միացած մեղաց ծանրութենովն տրտմած և խոնարհված և գոնում էն խոստմունքի կատարվիլն՝ թէ նորանք որ տէրին համբերում են և յոյս են դնում, նոր զօրութիւն կըստանան. և ապա գնում իրան ճանապարհն որ նոր զօրութեով և քաջութենով կռիւ անէ մեղքի և Աշխարհքի և թշնամութե դէմ. մինչև որ յաղթօղ լինի Քրիստոսովն՝ որ սիրեց նորան. և էսպէս հաւատքով ընդունում յաւիտենական կեանքըն և երանութեան հաստատ յոյսըն էն երկնաւոր արքայութեան մէջն, որ նորա մէջ ոչ մինչ սուտ բան չի կարօղ մտնել. որ էնտեղ ամէնն ճշմարտութիւն միաբանութիւն, և սէր կըլինի։



Ո՛վ կարդացօղ թէ հայր ես դու կամ ընտանեաց գլխաւոր. ապա սովորցրու և խրատի՛ր քո որդոցն և նորանց, որ քո հրամանի տակն են, որ իմանան թէ քանի հարկաւոր և օգուտ է՝ միշտ ճշմարիտըն խօսիլն և սրա համար առաջ ինքդ Աղօթք արա՛ նորանց համար և յետոյ նորանց էլ առաջնորդի՛ր ընորհաց աթոռի մօտն, ամէնակարօղ Աստուածանից էն զօրութիւնըն ստանալոյ համար, որ նորանց կարօղ է հաստատել ճշմարտութեան ճանապարհումն։ Եւ որովհետև նորանց հոգիքն քո հոգացօղութեան են յանձնված՝ ապա յորդորումենք քեզ որ արթուն լինիս նորանց վերայ անդադար արթնութենով և սիրով. որ ճշմարտութեան ճանապարհից դուրս չըգան։ Ամէնից աւելի զգոյշ կաց, որ նորանք քո օրինակումն և վարքումն իսկի մին էնպէսի բան չըգտնեն, որ հակառակ լինի ճշմարտութեան, բայց շատ պզտիկ և փոքր բաների մէջն էլ քո անձըդ ճշմարտութեան օրինակ կանգնացրու. պատճառն որ՝ օրինակն միշտ աւելի զօրաւոր է քան թէ ամէն վարդապետութիւն և խրատ։ Մատ. 5.16։

Ո՛վ սիրելի մանկունք. աղաչումենք ձեզ մտքներդ առէ՛ք, թէ

որքան մեծ մեղք կըգործէիք, եթէ սուտ խօսելոյն մատնըվիք, ուրիշ սուտ ասօղ և մեղք սիրօղ մանկանց նման, որ քաղաքների և շէների մէջ սեռնուամենք: պատճառն որ՝ թէ և կարենաք ձեր ծնողքըն և վարժապետներըն խաբել, բայց չէք կարօղ Աստուածանից մին բան թագցնել կամ ծածկել. ինչու որ՝ նա ամմէն բան տեսնումէ և գիտուամէ *. և թէ որ ստուերեան կամ ուրիշ մեղքերի մէջ կենաք և մեռնիք, հաստատ որ նա յաւիտեան կըպատժէ ձեզ դժոխքին մէջուամն: Դուք դեռ ճահիլ երեխայ էք. բայց հսպէս էլ կարելի է որ շուտով մեռնիք: Մինչն թէ ձեր երեխայութիւնըն չի խափանում ձեզ աղօթք անելուցն. և Աստուած շատ սիրուամէ որ նորահաս երեխաների աղօթքըն լսէ: Սրա համար սրտի մտօք աղաչեցէք նորան որ ձեզ թողութիւն տայ՝ մեղաւորների փրկիչ մեր Տէր Յիսուսի Քրիստոսի սիրոյն համար. որ նա ասուամէ. Թոյլ տուէք երեխաներիդ որ ինձ մօտ գան և դորանց մի՛ արգելէք. ինչու որ՝ էդպէսիներինն է երկնքի Արքայութիւնն. Մատ.19.14: Աղօթք արէք, որ իրան շնորհքովն տայ ձեզ, որ միշտ սուտ խօսելոն ատիք, և նորա դէմ արթուն լինիք և որ էլ զօրութիւն տայ ձեզ որ ձեր բոլոր կեանքուամն ճշմարտութիւն խօսիք: * Եփ. 4.13:

Ծառաներ. արթուն կացէք, որ չըլինի թէ մին բան ձեր տէրերին կամենաք ծածկել և հենց սրա համար սուտ խօսելոյն մէջ ընկնիք. պատճառն որ՝ էս բանըս անելով դուք ձեր մեղքըն և յանցանքըն շատացնուամէք, մեղք մեղքի վերայ աւելացնելով: Սրա համար մի՛ համարձակվիք էնպէսի բան գործել, որ պէտք է կամ ծածկէք կամ նորա համար թողութիւն խնդրէք և ապա դուք էնքան շատ ժամանակ փորձութեան մէջ չէք ընկնիլ. որ սուտ խօսիք: Էլ շատ օգուտ կըլինի ձեզ բարի ծառայի անունըն լսանալոյ համար՝ եթէ մարդիքն ճանաչեն ձեզ. որ իսկի սուտ չէք ասուամ և ձեր տէրերն էլ թէ և իրանք շատ լաւ չըլինին, միշտ ձեզ աւելի կըսիրեն, թէ որ ձեր մեղքըն խոստովանիք, քան թէ էն ժամանակն որ ձեր սխալմունքըն սուտ ասելովն կամենաք ծածկել: Էն էլ մտքներդ բերէք. որ ձեր շատ ծածուկ խորհուրդներն էլ յայտնի են ձեր Երկնաւոր Տէրին *, որ մին օր պատասխան պիտի տաք նորա առաջին էն ամմէն անիրաւ խօսքերին համար որ խօսեցիք Երկրի վերայ: Մենք ամմէնքս պէտք է յայտնի լինինք մեր Տէր Յիսուսի Քրիստոսի արդար դատաստանի աթոռի առաջին. որ ամմէն մէկն ընդունի իրան մարմնովն. ինչ որ առաջ գործեց թէ բարի և թէ չար: Ը. Կոր. Ե:10: Հռ.14.12:

Ուրեմն՝ եկէք ջանք անենք որ հաւատարմութենով կատարենք աստուածանից մեզ համար նշանակված և հաստատված գործըն, և արդարութենով գնանք նորանուամ. ինչպէս թէ՝ համար պիտի տանք. որ ուրախութենով անենք էն. և ոչ թէ յոգոց հանելով: Եբր. ԺԳ.18: ՎԵՐՋ

*. Նումրայ Ջին
Վասն ասոյ ասելէ . Նէրսէս Հնորհալին ինչ է ասել պէս ի վայր

*. Իսկ՝ առ մերովքս տեսանեմք՝ ոչ միայն գողութիւն, այլև՝ ստութիւն՝ վե գողութեանն, ոչ լոկ բանիւ, այլև՝ մեծամեծ երդմամբ ուրացութիւն, որոյ մեղաց՝ չիք թողութիւն: Զի և ոչ զղջումն և խոստովանութիւն՝ առ այն՝ յորմէ գողացաւն, զի թողութեան իշխանութիւն՝ գողոյն, յաղագս գողացելոյ իրին, որ տէրն ի գողացեալ գոյին՝ ունի, և ոչ օտար ոք խոստովանահայր: Վե՝ զի ոչ խոստովանի նմա, և ոչ հատուցանէ՝ զոր գողացաւն ի նմանէ՝ և զրկեաց, ոչ ասեմ չորեքկին՝ ըստ մաքսաւորին Զաքէի, այլև՝ ոչ զոր էառն, ոչ ընդունի թողութիւն յաւիտեան: Ընդհանրական, երես .29. տպեալ ի Սանկտպետրբուրգ. Յամի Տ՚ն. 1788: Եւս երես 22. տպեալ ի Կոստանդնուպոլիս .1825:

Վասն ասոյ ասելէ Պօղոս Պապլիպցին ինչ է ասել պէս ի վայր

գ. Պարտին ծնօղք՝ զարժապետք՝ և ամ արհեստից ուսուցիչք զմատաղ մանկունս և զերիտասարդս խորշեցուցանել ի սուտխօսութենէ, մանաւանդ ի սուտ երդմանէ:

Զի որ միանգամ ի չար ախտ ինչ սովորի ի մանկութեան անդ՝ բազում աշխատութեամբ հազիւ զերծանի յայնմանէ ի մեծութեանն: Եւ յոյժ դժուարաւ կարէ ազատիլ ի սուտութենէ և ի յերդմանէ. զի ունի գործի զլեզուն, որէ դիւրաշարժ, և ամ ուրեք պատրաստական: Որոյ աղագաւ բազում արհնութեամբ պարտին զգուշանալ ծնօղք և դաստիարակք նորաւիթիւթ մանկանց, զի մի՛ սովորեսցեն նոքա ի սուտութիւն և յերդումն: . . .

դ. Աւաղ թշուառութեանս, են ոմանք որք զերդումն այնքան սիրեն և վարժել են ինչև ի խօսիլ ընդ միմեանս՝ զանունն Աստուծոյ անխտիր: Եւ զայս առնեն ոչ ի պահանջմանէ հարկին՝ այլ ի չար սովորութենէ. զի որ ուսեալ է երդնուլ. ընդ ում խօսիցի՝ զինչ և խօսեցի՝ առանց երդման ոչ խօսի †:

Բայց այսչ զարմանք, թէ զիա՞րդ մարդիկ ոչ յանդիմանեն զնոսա: տես երես 163 . . . 166. Հատոր . Ը . Պօղոս Պատրիարգի Թանգարան խրատու . տպեալ 1824. ի Տպարանի Պօղոսի Արապեան . որ ի Յօրթագիւղ.

---

†. Հատ տխրութիւն պատմութիւն է. և տխրութեամբ է պատմվում. որ այժմ Բանկալու Պատուելի Հայոց Ազգի ցածերի մէջն նոր նոր կերպ երդում ուտելէ դուս եկել. և երկրականաց յուշունցներ. և է այս պէս:

Իմ կարգն վկայ: Հրամանոց կարգն վկայ: Էն սկինն վկայ: Էս

եկեղեցին վկայ: իմ արևն սիրես: քո արևն: իմ մահն տեսնես: իմ արիւնն խմես: իմ գլուխն ուտես: ինձ Թաղես: ևն մնաց

Մի Թէ աղբիւր անդստին 'ի միոյ ականէն բղխիցէ քաղցր և դառն: Յակ. 3. 9—12: Մ ատ. 12. 34:

յուշնանդնէին է. սալա. քոյրապիղծ. մայրպղծիչ. ևն Բանկալայ ինպէս Հայեր կան որ եբոր միմեանց հետ հայևար խոսմանան. վերոյ տպած երկրականաց ամօԹալից յուշունց ներն ասումեն:

Սերակարկաջ կոչեցեալ տաղարանն որ 'ի կալկաԹայ. 1830. ուժն տպվեալայ. Հայևար գրերով բանկալցևար Հնտստանցևար ևն ամօԹալի խաղեր. ովոր մտադրուԹեամբ կարդացեալայ նա միայն գիտե ինչպես վատ և վնասակար գիրքէ. յատկապես վասն ջահելանուն:

Խառնակեցան ընդ հեԹանոսս և ուսան զգործս նոցա: Սաղմոս. 105. 36: Տէր Յեն ողորմի պատուելի Հայոց Ազգին

Անանիա և Սափիրայէ մահն. Ոչն ատ-ատելէ հատոր գործոց Առաքելոց. գլ. 5. 1. * Իսկ այր ոմն անանիա անուն, հանդերձ կնաւ իւրով սափիրաւ վաճառեաց ագարակ. 2. * և խորեաց 'ի գնոց անտի՝ գիտելով և կնոջն. և եբեր մասն ինչ՝ եդ առ ոտս առաքելոցն: 3. * Ասէ Պետրոս. անանիա՝ ընդէ՞ր եղից սատանայ զսիրտ քո՝ ստել քեզ Հոգւոյն Սրբուոյ, և խորել 'իգնոց գեղջն. 4. * ո՞չ ապաքէն մինչ կայրն՝ քո էր, և 'ի վաճառելն՝ ընդ քո իշխանուԹեամբ էր. զի՞ է՝ զի եդեր 'ի սրտի քումմ զիրս զայս. ո՛չ ստեցեր մարդկան, այլ ԱՅ: 5. * Եւ լուեալ անանիա զբանս զայսոսիկ՝ անկաւ՝ և եհան զոգի. և եղև ահ մեծ 'ի վերայ ամենեցուն՝ որ լուանն զայն: 6. * Յոտն կացին երիտասարդքն՝ և ամփոփեցին զնա, և տարան Թաղեցին: 7: * Եւ եղև իբրև ժամք երեք անցին, և կինն նորա ո՛չ գիտէր զինչ եղեալն էր, եմուտ 'ի ներքս: 8. * Պատասխանի ետ նմա պետրոս և ասէ. ասա դու ինձ՝ Թէ աւնչափ գնոց զգեօղն վաճառեցիք: և նա ասէ. այո՝ այնչափ: 9. * Եւ ասէ ցնա պետրոս. զի՞ է՝ զի միաբանեցայք դուք փորձել զՀոգին Տեառն. ահա ոտքն՝ որ Թաղեցին զայրն քո 'ի դրան. հանցեն և զքեզ: 10. * Եւ անկաւ անդէն առ ոտս նորա՝ և եհան զոգի: մտին երիտասարդքն՝ գտին զնա մեռեալ, և հանին Թաղեցին առ առն իւրում: 11. * Եւ եղև երկիւղ մեծ 'ի վերայ ամենայն Եկեղեցւոյն, և 'ի վերայ ամենեցուն որ լուան զայն:

Եւ ասէ ցիս. այդ են անՀծք որ ելանեն 'ի վերայ երեսաց ամ երկրի: զի ամ գողոյ վրէժ մահու չափ, դովաւ խնդրեսցի, և ամ ստերդման վրէժ մահու չափ՝ դովաւ խնդրեսցի: Զաք. 5. 3:

Որ ասէ զամպարիշան Թէ արդար է՝ անիծեալ 'ի ժողովրդոց լիցի, և ատելի յազգաց: Իսկ որք յանդիմանենն. նոքա լաւք երևեսցին, և 'ի վերայ նոցա եկեսցէ օրհնուԹիւն բարեաց: Առակ. ԻԴ. 24. 25: Եսայ. Ե. 20:

Ա. Ղուկայ Էջ 1

1 Զոլլոյէ թագաւորութեան գԱ.Ե. եւ նեեմանի իշխանութեան զօրուն
ասորւոց, էր այր մեծ առաջի տեառն իւրոյ, և սքանչելի
եղեսոք. զի նովաւ ետ աւր փրկութիւն ասորւոց: և այրն հզօր
2 զօրութեամբ էր, և բորոտեալ[1]: * Եւ ասորիքն մեկնակազմեալք՝ ելին
և գերեցին յերկրէն իւրմէ աղջիկ մի փոքրիկ, և էր առ կնոջն
3 նեեմանայ. * և ասէ ցտիկին իւր. յանկարծ երթայր տէրդ առ
առաջի մարգարէին որ ՚ի սամարիա. և անդէն աւաքէր զդա
4 ՚ի բորոտութենէ իւրմէ: * Եւ եմուտ՝ և պատմեաց տեառն իւր-
ում և ասէ. այսպէս և այսպէս խօսեցաւ աղջիկն որ յերկրէն
5 իսրայէլ: * Եւ ասէ արքայն ասորւոց ցնեեման, երթ և ես առաք-
եցից հրովարտակս առ արքայն իսրայէլ: և գնաց. և առ ՚ի ձեռին
իւրում տասն տաղանտ արծաթոյ, և վեցհազար դահեկան, և
6 տասն պատմուճան հանդերձեալ[2]: * և տարաւ հրովարտակս առ
արքայն իսրայէլ: Եւ էր գրեալ այսպէս, արդ՝ իբրև հասցէ առ
քեզ հրովարտակդ այդ. ահա առաքեցի առ քեզ զնեեման ծառայ
7 իմ, և աւաքեսցես զդա ՚ի բորոտութենէ իւրմէ: * Եւ եղև իբրև
ընթերցաւ արքայն իսրայէլի զհրովարտակն, պատառեաց զհանդերձս
իւր՝ և ասէ. միթէ ած իցեմ ես՝ սպանանել կամ կեցուցանել,
զի առաքեաց առ իս աւաքել զայրդ ՚ի բորոտութենէ իւրմէ.
բայց գիտասջիք և տեսջիք զի պատճառ իմն նա առիս[3]:
8 * Եւ եղև իբրև լուաւ եղիսեէ այրն Ա.ստուծոյ՝ եթէ պատառեաց
արքայն իսրայէլի զհանդերձս իւր, առաքեաց առ արքայն իսրայէլի և ասէ.
ընդէ՞ր պատառեցեր զհանդերձս քո, եկեսցէ առ իս նեեման, և
գիտասցէ թէ գոյ մարգարէ յիսրայէլ: [1] Ղ.ե.ւ. 4. 27: Եւթ.11. 3:
9 * Եւ եկն նեեման երիվարօք և կառօք, և եկաց առ դուրս
10 տանն եղիսեէի: * և առաքեաց եղիսեէ առ նա հրեշտակ՝ և ասէ,
երթ լուա եւթն անգամ ՚ի յորդանան, և դարձցի մարմին քո
11 և սրբեսցիս[4]: * Եւ բարկացաւ նեեման, գնաց և ասէ. ես
ասէի թէպէս ելցէ առ իս, և կացցէ յաղօթս և կարդասցէ
զանուն Ա.ստուծոյ իւրոյ, և դիցէ զձեռն իւր ՚ի վէր տեղւոյն,
12 և աւաքեսցէ զբորոտութիւնս: * ո՞չ լաւ իցեն նաբանա և փար-
փարա գետք դամասկոսի քան զամ ջուրս իսրայէլի. և ընդէ՞ր ոչ
երթայց և լուացայց ՚ի նոսա, և սրբեցայց: և դարձաւ և գնաց
13 սրտմտութեամբ: * Եւ մատեան ծառայք նր և խօսեցան ընդ նմա,
և ասեն ցնա. հայր, եթէ մեծ ինչ բան խօսեցեալ էր ընդ քեզ
մարգարէին, ո՞չ ապաքէն պարտ էր առնել. թող թէ զի ասաց՝
14 լուացիր և սրբեսցիս: * Եւ էջ նեեման՝ և մկրտեցաւ ՚ի յորդա-
նան եւթն անգամ ըստ բանին եղիսեէի. և դարձաւ մարմին

---

[2] 1.թագ.9.8;4.թագ.8.8.9; [3] Ծննդ.30.2;2.Օրէն.32.39;1.թագ.2.6; [4] 4.թագ.4.41;Յովհ.9.7:

նորա իբրև զմարմին մանկան մատաղոյ՝ և սրբեցաւ [1]։

15 * Եւ դարձաւ առ եղիսեէ, ինքն և ամ բանակն իւր, և եկն եկաց առաջի նր՝ և ասէ. ահա գիտացի լթէ ոչ գոյ ած յամ երկրի՝ բայց միայն ի մէջ Իսլ. և արդ՝ առ օրհնուխի ի ծառայէ

16 քումմէ [2]։ * Եւ ասէ եղիսեէ. կենդանի է տեր որոյ կացի առաջի նր, եթէ առիցի ինչ։ և ստիպեաց զնա առնուլ. և ոչ հաւանեցաւ [3]։

17 * Եւ ասէ նեեման. իսկ որովհետև ոչ՝ տացին ծառայի քումմ բեռինք զուգից ջորւոց ի հողոյ երկրիս. զի ոչ ևս արասցէ ծառայ քո ողջակէզս և զոհս աստուածոց օտարաց, բայց միայն

18 տեառն * վս բանիս այսորիկ. և քաւեսցէ տեր զծառայ քո՝ ի մտանել տեառն իմոյ ի տունն ռեմանայ երկիրպագանել նմա. յորժամ կենուցու ի ձեռս իմ, և երկիր պագանիցեմ ի տան ռեմանայ՝ ի պագանելն նր երկիր ի տան ռեմանայ։ և քաւեսցէ տեր զծառայ

19 քո վս բանին այնորիկ [4]։ * Եւ ասէ եղիսեէ ցնեեման. երթ խաղաղութիւն։ և գնաց ինմանէ յերկրէն Իսլ [5]։

20 * Եւ ասէ գեեզի պատանեակն եղիսէի. ահա խնայեաց տէր իմ ինեեման ասորի, չառնուլ ի ձեռանէ նր յորոց մատոյցն. կենդանի է տէր՝ եթէ ոչ ընթացայց զկետ նորա, և առիցի ինչ

21 անտի։ * և պնդեցաւ գեեզի զկետ նեեմանայ։ Եւ ետես զնա նեեման՝ ընթացեալ զկետ նր. և դարձաւ ի կառացն ընդառաջ նր

22 և ասէ՝ ողջո՞յն է։ * Եւ ասէ գեեզի, ողջոյն է. տէր իմ առաքեաց զիս առ քեզ և ասէ, ահա եկին առիս երկու պատանեակք ի լեռնէն եփրեմի յորդւոցն մարգարէից, տուր նոցա տաղանտ

23 մի արծաթոյ, և երկուս պատմուճանս հանդերձեալս։ * Եւ ասէ նեեման. լթէ այդպէս իցէ, առ երիս տաղանտս արծաթոյ. և բռնադատեաց զնա, և ծրարեաց երիս տաղանտս արծաթոյ յերկուս պարկս, և երկուս պատմուճանս հանդերձեալս. և ետ ցերկուս

24 ծառայս իւր՝ և բարձին առաջի նր. * և եկին ի մթինն, և առ ի ձեռաց նոցա, և եդ ի տան. և արձակեաց զարսն՝ և գնացին։

25 * և ինքն եմուտ և կայր առաջի տեառն իւրոյ։ Եւ ասէ ցնա եղիսեէ. ուստի՞ գաս գեեզի։ և ասէ գեեզի. չի՛ք երթալ ծառայի քոյ՝ ոչ յայսկոյս և ոչ յայնկոյս։ * Եւ ասէ ցնա եղիսեէ,

26 ո՞չ սիրտ իմ գնաց յորժամ դարձաւ այրն ի կառաց անտի ընդառաջ քո. և արդ՝ առե՞ր զարծաթն և զհանդերձսն ի ձիթենիս և յայգիս, և յարջառս և յոչխարս, և ի ծառայս և յաղախնայս։ * Եւ բորոտութիւնն նեեմանայ յարեսցի ի քեզ՝ և ի զա-

27 ւակ քո յաւիտեան։ և ել յերեսաց նր բորոտեալ իբրև զձիւն [6]։

---

[1] Ց՝վր.33.25: Ղ՝ա.4.27: [2] Դ՝ա.2.47: 3.29: 6.26.27: Ճ՝ա.33.11: [3] 4.Թ՝ա.3.14. Ճ՝ա.14.23: Մ՝ա.10.8: Գ՝ա 8.18.20: [4] 4.Թ՝ա.7.2.17: [5] Ճ՝ա.35.16: [6] 1.Տ՝մ.6.10: Ելմ.4.6: Թ՝ա.12.10: 4.Թ՝ա.15.5:

ԹՈՒՂԹ

ԿԱԹՈՒՂԻԿԵԱՅՑ ՊԵՏՐՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅ

ԵՐԿՐՈՐԴ

1 ԳԼ. Ա: Շմաւոն պետրոս ծառայ և առաքեալ † յի-
քեան, որոց հանգիտապատիւ մեզ հասեալ հաւատոց յարդարութիւն
2 աւ մերոյ և փրկչին յի քոյ[1]: * Շնորհք ընդ ձեզ՝ և խաղաղու-
թիւն բազմասցի գիտութեամբն աւ՝ և յի քոյ տն մերոյ[2]: *
3 Որպէս ամենայն ինչ մեզ՝ իւրոյ ածելչին զօրութենն ա-
ւ՛ի կեանս և յածպաշտութիւն շնորհեալ. ՛ի ճեռն գիտութեան
այնորիկ, որ կոչեացն զմեզ յիւր՛ի փառսն և՛ի վայելչութի[3]:
4 * Որով մեծամեծքն և պատուական աւետիք պարգեւեալ են
մեզ. զի նոքիմբք ածելչին բնութենն լինիցիմք հաղորդակից,
փախուցեալք ՛ի ցանկութեց աշխարհիս և յապականութեց[4]:
5 * Եւ սմին այսմիկ զամ փոյթ՛ի մէջ առեալ՝ ձերով՛ք հաւատովքն
մատակարարեցէք զառաքինութի, և առաքինութենն զգիտու-
6 թիւն[5], * և գիտութենն զժուժկալութիւն, և ժուժկալութենն
7 զհամբերութիւն, և համբերութեամբն զածպաշտութի, * և
ածապաշտութենն զեղբայրասիրութիւն, և եղբայրսիրութենն զսէր[6]:
8 * Զայսոսկի ձեր յանձին կալեալ՝ և՛ի սոյն յաճախեալ, ոչ
դատարկս և անպտուղս զձեզ հաստատիցեն ՛ի տն մերոյ յի-
9 քոյ գիտութի[7]: * Իսկ յոր ոչն ի՛ցեն սոքա մերձ ‡, կոյր է և
զաչացու. ՛ի մոռացօնս դարձուցեալ զսրբութի առաջնոց իւրոցն
10 յանցանաց[8]: * Վասն որոյ ՛ղբարք՝ առաւե՛լ փութասջի՛ք՝ զի

---

[1] Յ-Վհ.1.42: Գ-ր.15.14: Հ-Վ.1.12: 2.Կ-ր.4.13: Եփ.4.5: Տիտ.1.4: 2.13: [2] Դ-ն. 4. 1: 6. 25: 1.Պետ. 1. 2: Յ-ա-յտ. 2: [3] Ց-Վհ.17.3: 1.Թես.2.12: 4.7: 2.Թես.2.14. 2.Տիմ.1.9: 1.Պետ.2.9: 3.9: [4] 2.Կ-ր.7.1: 3.18: Եփ.4.24: Եբր.12.10: 1.Յ-Վհ.3.2: 2.Պետ.2.18.20: [5] 2.Պետ.3.18: 1.Պետ.3.7: [6] Գ-ծ.6.10: 1.Թես.3.12: 5.15: 1.Յ-Վհ. 4.21: [7] Յ-Վհ.15.2: Տիտ.3.14: [8] ա.Յ-Վհ.2.9.11: Եփես.5.26: Եբր.9.14: 1.Յ-Վհ.1.7:

† Շ-մաւոնի պետրոս ոչ է. սես էս սեպհականի ՀԻՒԼՈՒՍ Կ-ՀՍՄՈՍ. Եբեր:

‡ 2 Pet. i. 9. But he that lacketh these things is blind, and cannot see afar off, and hath forgotten that he was purged from his old sins.

բարեացն գործովք հաստատուն զձեր կոչումսն, և զընտրութի
պահիցեք: Զայս արարեալ՝ ոչ երբեք յանցանիցեք[1]. * զի այսպէս 11
առատապէս շնորհեսցի ձեզ մուտ՛ի յաւիտենական արքայութիւն
տեառն մերոյ և փրկչին յսի քսի: * Վասն որոյ պատրաստիցեմ 12
միշտ ձեզ յիշեցուցանել վս սոցին առաւել և պիտակացն և
հաստատելոցն՝ եկեալ հասեալ ճշմարտութեն[2]:
* Քանզի իրաւունս համարիմ մինչդեռ եմ՛ի մարմնի աստ՝ 13
զարթուցանել զձեզ յիշատակօք[3]: * Գիտեմ թէ վաղվաղակի 14
ե լինելոց մերկանալ յինէն մարմնոյս. որպէս և տէր մեր յս
քս եցոյց ինձ[4]: * Եւ փութամ ճեպիմ միշտ զձեզ յորդո- 15
րել. զի և յետ իմոյ ելանելոյ յաշխարհէս՝ առնիցէք զյիշատակս
այսոցիկ: * Քանզի ոչ եթէ պաճուճեալ հնչ առասպելաց զհետ 16
երթեալ ցուցաք ձեր զտն մերոյ յսի քսի զզօրութիւն և զգալուս-
տն. այլ մեզէն եղեալ ականատեսք նորա մեծութեն[5]: * Քանզի 17
առեալ յայ և՛ի հօրէ զփառս և զպատիւ. եկեալ յայնպիսի բար-
բառոյ՝ ՛ի մեծ վայելչութե փառաց անտի. Եթէ դա ե որդի
իմ սիրելի՝ ընդ որ ես հաճեցայ[6]: * Եւ զայս բարբառ մեք իսկ լս- 18
աք եկեալ յերկնից՝ որ ընդ նմա իսկ էաք՛ի սբ լերինն[7]: * Եւ 19
ունիմք հաստատագոյն զբանն մարգարէական. որում եթէ անսայ-
ցէք՝ բարւոք առնէք. իբրև ճրագի՝ որ տայցէ լոյս՛ի խաւարչտին
տեղւոջ, մինչև տիւն լուսաւորեսցէ, և արուսեակն ծագեսցէ
՛ի սիրտս ձեր[8]:
* Բայց նախ այսմ գիտակ լինիջիք. զի ամ մարգարէութե 20
իւրոց գրոց լուծումն † ոչ ունի[9]: * Քանզի ոչ եթէ ըստ կամաց 21
մարդկան ատաւ մարգարէութե երբեք, այլ՛ի հոգւոյն սբ
կրեալք՝ խօսեցան մարդիկ յայ[10]:

---

[1] 1.Յ-Վհ.3.19: 2.Պետ.3.17: [2]Հռ-վ.15.14.15: Փիլ.3.1: 2.Պետ.3,1: 1.Յ-Վհ.2.21: Ց-ե-յհ.5: 1.Պետ.4.12: 2.Պետ.3.17: [3] 2.Կ-ր.5.1.4: 2.Պետ.3.1: [4]2.Օրհ.4.21. 22: 31.14: 2.Տիմ.4.6: Ց-Վհ.21.18.19: [5]1.Կ-ր.1.17: 2.1.4: 2.Կ-ր.2.17: 4.2: Մ-ա. 17.1.2: Մ-ր.9.2: Ց-Վհ.1.14: 1.Ց-Վհ.1.1: 4.14: [6]Մ-պ.3.17: 17.5: Մ-ր.1.11: 9.7: Ղ-ս.3.22: 9.35: [7]Եբհ.3.5: Ցե-.5.15: Մ-ր.17.6: [8]Ս-ղ.118.105: Ց-Վհ.5.35: Ց-յ.2.28: 22.16: 2.Կ-ր.4.4.6: [9]Հռ-վ.12.6: [10]2.Տիմ.3.16: 1.Պետ.1.11: 2.Ք-ա. 23.2: Ղ-ս.1.70: Գ-ր.1.16: 3.18:

† 2 Pet. i. 20, 21. Knowing this first, that no prophecy of the scripture is of any private interpretation: for the prophecy came not in old time by the will of man; but holy men of God spake *as they were moved* by the Holy Ghost.

† Նոյեմբեր երե
Սիմօն Պետրոսն ովէր . պես ՚ի վայր

Եւ ասէ ցնա . եկայք զկնի իմ, և արարից զձեզ որսորդս մարդկան : Մտթ . 4.19 :

Եւ իբրև այդ եղև՝ կոչեաց զաշակերտսն իւր, և ընտրեաց ՚ի նոցանէ երկոտասանս . զորս և առաքեալս անուանեաց : Ղու . 6.13: Գաղ . 2. 8.11 :

† Շմաւոնի . կամ Սիմոն Պետրոս էր եղբայր Անդրէասի . Մտթ . 4.18: Յով .1. 40—42: սա ով է՞ . և ի՞նչ էր սորայ պաշտօնն . իւր իսկ գրուածիւներն որ սուրբ Աւետարանումն է՝ անտի փոքր ինչ օրինակեալ աստ տպվեց . որ Ճշմարտութիւնն յայտնի լինի ամենեցուն . տես ՚ի վայր :

Պետրոս Առաքեալ յեր քեն , ընտրելոցդ նժդեհից , որ ՚ի սիրուա պոնտացւոց գաղատացւոց և կապադովկեցւոց և ասիացւոց և բիւ թանացւոց .1. Պէտ .1. 1:

Ջերիցունս այսուհետև աղաչեմ, իբրև երիցակից՝ և վկայ չարչ չարանացն քեն , որ և հանդերձեալ փառացն յայտնելոց հաղորդ . 1. Պէտ .5. 1: վերնի գլուխն գրվելէ ամէ պեառն հաւատոյ . A. D. 46. պես Օգոստինոս կալմէնի բառուպան առուբ Գրոց : Ա

Շմաւոնի . կամ Սիմոն Պետրոս ծառայ և առաքեալ յեր քեն , որոց հանգիստապատիւ մեզ հասեալդ հաւատոց յարդարութիւն այ մերոյ և փրկչին յեր քեն : 2. Պէտ .1.1: վերնի գլուխն գրվելէ ամէ պեառն հաւատոյ . A. D. 65. պես Օգոստինոս կալմէնի բառուպան առուբ Գրոց :

Ահա վերոյ տպեալ սուրբ Աւետարանի վկայութիւններովն հաստատվեց որ . Թէպետ Սիմոն Պետրոսն յայտնի երկու մեղքեր գործել . այ նախ որ Պետրոսն իւր վարդապետին լսելը որ իւր վարդապետն պարզ և յայտնի ասելը . * Եւ որ ուրացայ զիս առաջի մարդկան , ուրացայց և ես զնա առաջի հօր իմոյ՝ որ յերկինսն է : Մտթ .10. 33: դեռևս ինքն երեք անգամ իրար վերայ շատ վատ կերպով . և տեղով իւր ոտնկր լուանող . Յով .13. 8. 9: Վարդապետ և փրկիչին ուրացաւ . Մատ .26. 69—75:

Եւկղդէն . երբոր Յուդայիսկարիօատացին և ամբոխն եկան որ Յեին բռնեն . առանց Յեի հրամանն . մաղքոսի անկոչն Պետրոսն կտրեց Ղու .22. 49—51: Յով .18. 26: յետ այսու ամենայնի Յե Պետրոսի մեղքերն ներէց . և կրկին Առաքելական պաշտօնումն հաստատեց . Յով .21.15—19: որ Առաքեալ մնայ . և Պետրոսնել Առաքեալ մնաց մինչեւի վերջն : սոյն այս Պետրոսն ինքն ովկ և ինչ էր . քեն համբարձվելոյն . 65. տարէն յետ . ինքն քրիստոսէ ընկից գրերէ . որ ինքն Սիմոն Պետրոսն . Յեի քեի ծառայ . և Առաքեալն էր : և քեն եկեղեցւոյ երիցանց պես մին երէց էր . և ել առաւել ոչ ինչ : Գործ .15.6—35:

Կոչնակէս և հոգին՝ ի լինելոյ հաւանէ փափուրենան
ջերմ. պէտ չէ զոր ինժէն յաղօրս ոչափս աւրժան էցէ՝ ուչ
գիսեմ. այլ ինժն հոգին քաւելոյ լինել՝ ի հետևրենան
անմատուանչս ։ Հռովմայեցւոց ։8։ 26։

Այսչ սովորական ոճ գրոց, որով ասի այ առնել ինչ՝ ըստ որում մեզ տայ զառնելն. և նման այսմ ասաց տէրն. Տաւր. ժ. 20. * Որ եթէ դուք իցէք՝ որ խօսիցիք, այլ հոգին հօր ձերոյ, որ խօսիցի ՚ի ձեզ։ Այ ուչ ձերով զօրութեամք կամ իմաստութեամք խօսիցիք, այլ հոգւոյն սրբոյ ազդելովն։ Այնպէս և առաքեալս առ գաղատ. ե. 6. զՀոգւոյն սրբոյ ասչ. * որ աղաղակէ աբբայ հայր. || իսկ աստ ՚ի ։15. տան զմէնջ ասաց։ * որով աղաղակեմք աբբայ՝ հայր։ || այս իբր բացայայտութիւն է միւսոյն. և հռուփինոս ընտանի օրինակաւ նկարագրչ. զոր օրինակ ասչ՝ վարդապետ մանկանց յուսուցանել նոցա զայբուբենս կամ զկարդալ, ինքն նախ արտասանչ՝ և մանուկն ընդ նմա. նոյնպէս յուսուցանելն զգիր՝ ինքն վարդապետն գրչ առաջի մանկան. և երբեմն զմատունս նորա կալեալ, ընդ նմա ձևաց ցուցնչ զգիրն. և այնչափ զիջանի ընդ մանկանն, մինչ զի կարծել թչ ինքն ուսանիցի զկարդալ և զգրել. և զայսոսիկ առնչ՝ զի մանուկն ըստ պատչաճի ընթեռնուցու և գրեսցչ այնպէս, որպէս ախորժչ վարդապետն, և այլք տեղեակք։ Ըստ այսմ օրինակի չ և հոգւոյն սրբոյ բարեխօսելն. զոտգիտքս արժանաւոր աղօթից՝ ուսուցանչ ներքուստ, և զօրացուցանչ առնել զայն իղձս՝ և այնու օրինակաւ, որ հաճոյ չ այ. զի որպէս ամբրոսիոս ասչ ընդ՚ղ չ. նախ քան ուսոյց զօրինակ աղօթից, և յետ նորա ում այլ՝ բայց հոգւոյն սրբոյ անկ էր ներքուստ ուսուցանել և ուղղել զիղձս աղօթից. և թէպետ բովանդակ սուրբ երրորդութիւնն ներգործչ ՚ի մեզ զայսոսիկ, բայց իբրև գործ բարութեանն այ ազդեալ ՚ի կամս աղօթականին հանդերձ սիրով՝ առանձինն հոգւոյն սրբոյ ընծայի։

Յասացելոցս իմանալի չ, թէ այլազգ քն ասի բարեխօս վանմեր, և այլազգ՝ Հոգին սուրբ. զի քն ըստ մարդկութեանն ՚ի վայր գոլով քան զած, կարօղ չ իսկապէս աղաչել և միջնորդել առ ած վանմեր. որպէս զկնի ունիմք ասել ՚ի ։34. տան։ Բայց հոգւոյն սրբոյ ուչ յարմարի ըստ այդմ օրինակի, այլ միայն ըստ ազդելոյն ՚ի մեզ զիղձս աղօթից. և ըստ այսմ մտաց պարտ չ իմանալ ևն. . .

Իսկ այդ՝ ո՞վ չ որ գտանէցչ. Ես յն, որ չեռաւն՝
Տանուտունք ընչ յատուցեալ իսկ չ. և չ ընդ այլմ այ. որ
և բարեխօս իսկ չ վասն մեր։ Հռովմայեցւոց. 8. 34։
Ե՞չ ընդդէմ այ հօր՝ առ ՚ի տալ մեզ յոյս թագաւորելոյ. և
աթոռակից լինելոյ ընդ այ. զի ընտրեալքն իբրև անդամք քնի՝

մշանջենաւոր ընդ նմա բազմին. ըստ ասելոյն. Եփեսաց. ե. 5. * ընդ նմին յարոյց, և ընդ նմին նստոյց յերկնաւորս ’ի քս: || զսոյն խոստանայ և յայտն. գ. 21: Եւ ոչ միայն վասն այսր նստի ընդ աջմէ հօր, այլև վասն այնր՝ ոչ ևս քաւէխօս էակ է վասն մեր: Վասն զի նստի ընդաջմէ մեծուլթեանն ’ի բարձունս իբրև քահանայապետ մեր. Եբրայ. ե. 1. իբրև պաշտպան և բարեխօս, և միջնորդ հաշտուլթեան: Արդ՝ այսպիսումն ոչ է անկ ամէնաստանել և դադտապարտել, այլ ջատագով կալ ամէնաստանելոյն՝ ընդդէմ ամէնաստանողին, և խափանել զվճիռ պատուհասին: Զոր աստ յաւելու վասն մեր, ըստ կայետանոսի և ըստ այլոց բազմաց՝ իմանալի է զօրուլթեամբ յանցեալն ևս, ՅՍ մեռաւ վասն մեր, յարեաւ վասն մեր, նստի ընդաջմէ վասն մեր:

Ասացեալքս գլխովին ’ի բաց տանի առաքեալս յընտրելոց անտի զչորեսին երկիւղալիս դատապարտուլթեան,

1. զմեղսն՝ զոր քս մեռանելովն ջնջեաց.
2. զմահ մարմնոյ, զոր քս յարուլթեամբն կենդանացոյց.
3. զհերժումն ’ի դժոխս, զոր քսի նստելն ընդաջմէ հօր խափանեաց. և

4. զմշանջենաւոր անկումն յերեսաց աս, որում ընդ հակառակն քս միշտ ե բարեխօս առ ած:

Արդ՝ այսպէս բառնալով քսի զամ ճանապարհս դատապարտուլթեան ընտրելոց ո՞վ ոք կայ, կամ զի՞նչ այն՝ որ զնոսա դատապարտել կարօղ կայ: Եթէ որդին աս այսչափ հոգացաւ նոցա փրկուլթեանն, եթէ ած հայր չխնայեալ յորդին, նովաւ ընտրեաց և արդարացոյց, եթէ հոգին սուրբ տկարուլթեանս մեր ’ի թիկունս հասեալ բարեխօսէ, ’ի վերն.26. և այնպէս բովանդակ երրորդուլթիւնն ’ի խնամս ընտրելոց պատաղեալ կայ, դու զի՞նչ այլ երկնչիս՝ ասէ ոսկեբ. ‘ճաւտ. ժե: Մի թէ հրէայ, և հեթանոս, մարմին, սատանայ և այլ ամ ընդդիմակք կարօղ կայեն յափշտակել զընտրեալս ’ի ձեռանէ աս: Յովհ.10.29. . . .

Իսկ զայս աղօթել կամ բարեխօսել քսի ըստ մարդկուլթեան՝ ոմանք ոչ յատուկ խնդրուածս ասեն, այլ անյատուկ և մեկնողական. ըստ որում յերկինս յանդիման առնէ աս զիւր մարդկուլթիւնն, զամ խորհուրդս և զվաստակս կատարեալս ’ի նմա, և մանաւանդ զպատուական խաչին չարչարանաց, և զայս ամ առնէ բաղձանօք փրկուլթեան մերոյ: Այսպէս մեծն գրիգոր գէղ. իբ. բարոյ. կանաց. գլ. ժէ. ասէ, բարեխօսելն որդւոյ՝ է ցուցանել հօրն զանձն իւր մարդ. և աղաչելն վասն մարդկային բնուլթեան՝ է առնուլ զնոյն բնուլթիւն ’ի բարձրուլթիւն ածուլթեան իւրոյ: Բայց այլ վարդապետք և ածաբանք ընդունին զ յատուկ աղօթել քսի յերկինս, և յայս առնուն զասացեալն տեառն. յովհան.14.16. * Ես

ես աղաչեցից զՀայր , և այլ մխրճարիչ տացէ ձեզ : || վասն զի այն բաղձանք փրկուրեան մերոյ՝ զոր միշտ ընծայէ քս , ոչ կարէ կալ առանց յատուկ ներքին աղօթից , մանաւանգ թէ յայն իսկ սահմանի իսկութիւն աղօթից, որ ոչ է խօսք շրթանց՝ աղաղակաւ և արտասուօք հնչեցեալ , այլ հայցուած կամաց առ Ած վասն պիտանի բարեաց :

Քս որ մեր միշտ ունի զմարդկային կամս միաբան ընդ Ածայնոյն . Ճանաչէ զԱծ լինել առաջին տուիչ ամ բարեաց . և թէ ’ի տալ հօր զամ ինչ ’ի ձեռս նորա , ոչ բարձաւ այնու ինքնագործ տէրութիւն հօր : Ապա որպէս յայլսմ ամի պահէ միշտ զիւր հպատակութիւն առ հայր , սոյնպէս ’ի պարգևել զբարիս՝ աղաչէ զՀայր մարդկաբար, զոր ընորհէ Ածաբար ընդ հօր. որպէս և վասն յերկրի աղօթելոյն՝ ասէ ընորհալին ’ի ա ևուղն առ կիւ մանուել . * Աղօթեր ընդ մեր և վասն մեր որպէս զմարդ . և ընդուներ ընդ հօր իւրում զաղօթս ամենեցուն որպէս զԱծ : || ’ի բաց տարցի ’ի փրկչէ մերմէ կարօտութիւն հայցուածոց , որպէս յիրաւի պահանջէ ոսկեբերան . ’ի բաց տարցին և խոնարհական ձևք աղօթից՝ անվայել չափանք փառաւորեալ վիճակին . ըստ զգուշացուցանելոյ Ածաբանին ’ի յիշատակեալ տեղւոջ . որպէս են ծնրադրութիւն , անկումն ’ի վերայ երեսաց , հառաչել , տրտմիլ , արտասուել , և այլքն , զոր ’ի մահկանացու կեանս ունէր՝ ըստ առաքելոյն . եբր . ե . 7 . և այնուհետև պարզապէս աղօթելն ոչ միայն չհակառակի գերագոյն փառաց մարդկութեանն քի , այլ վայելուչ իսկ է քահանայապետական պաշտամանն՝ որով մատուցեալ կայ յերկինս . զի քահանայի գործ է պատարագս և աղօթս մատուցանել վասն ժողովրդեանն : Զայս ամ գեղեցիկ համառօտէ օգոստինոս ’ի մեկն . ասղմ . ձե . ’ի սկիզբն . ասելով . * Աղօթեսցէ վասն մեր , և աղօթեսցէ ’ի մեզ , և աղօթեսցէ ’ի մէնջ : Աղօթէ վասն մեր՝ իբրև քահանայ մեր . աղօթէ ’ի մեզ՝ իբրև գլուխ մեր . աղօթի ’ի մէնջ՝ իբրև Ած մեր : Ապա ծանիցուք ’ի նմա զմեր ձայնս , և զձայնս նորա ’ի մեզ . . . Աղօթի ’ի կերպարանս ՅՀ , աղօթէ կերպարանս ծառայի . անդ արարիչ , աստ արարած . . . Աղօթեմք առ նա , նովաւ , ’ի նմա . և ասեմք ընդ նմա , և ասէ ընդ մեզ . ասեմք ’ի նմա , ասէ ’ի մեզ : || Յաղագս բարեխօսելոյն քի տես դարձեալ եբրայեցւոց . է . 25: թեո երեո . 258.277. և 278. ’ի մրէնուրիւն թղկոց պօղոսի . էպրս . Ա . պեալ . ’ի վենետիկ .1806:

Ո՛սոքս և ջենդանի առնել հոմօրէն կարօղ է վճռողեալս
Նովաւ առ Ած . թանզի մէկ ջենդանի է՝ լինել
բարեխօս վասն նոցա : եբրայեցւոց .է. 25:
Ոչ անգործ և կամ ընդ տկարութեամբ անկեալ է մշանջենաւոր

քահանայութիւն քեի ։ Ո՞ւսի վասն լինելոյն անմահ և Ա Ն Յ Ա Ք
Ո Ր Դ քահանայ , հէնպանի ասելի հաւօղ է . հզօր ի միշտ , կազմ
և խնամոտ ապրեցուցանել , կեցուցանել , պաշտպանել զմարդ-
նովաս ասա ՝ա ծ . . ՝ի կարօղ ի քե կեցուցանել կատարելապէս և յաւիտ
զժողովուրդ իւր , այնպէս զի ոչ մի ինչ պակասիցի նոցա ՝ի կատար-
եալ փրկութենէ . և այսմ զհետ գայ ասացեալն ոսկեբերանին ,
ապրեցուցանել ոչ այժմ միայն , այլև ՝ի հանդերձեալսն , որով լինի
փրկութիւն կատարեալ ։ Ակնարկէ այսու զմիւս և խոտիր ՝ի զևտական
քահանայութենէ , որ ՝ի մասնաւորս ինչ կարօղ էր ապրեցուցանել
զժողովուրդ իւր , և ոչ յամ պետս նոցա , և ոչ միշտ ։

Քանզի ոչ հէնպանի է ։ Միշտ կենդանի ի քե ոչ միայն ըստ
քահանայութեան , այլև ըստ մատակարարութեան պաշտամանն , լինել
էութիւնս վասն նոցա ։ Լատինն միայն դնէ , վասն մեր . այլք ընդ-
հունին՝ վասն նոցա , ցուցանելով զմարդ-եսելոն ։ Այնպէս կենդանի
է ՝ի կատարումն քահանայական պաշտամանն , զի միշտ ընդունել
կարօղ է զխնդրուածս մեր և հանել առ ած . ճանաչէ համակ
զկարիս ժողովրդեան իւրոյ . ոչ զոք , և ոչ ՝ի մի ինչ անտես առնէ ,
գիտելով զի չունին զայլ ոք քահանայ և միջնորդ . յոյս ամենեցուն
՝ինա խարսխեալ , և նորա գութք և արթնութիւն առ ամենեսին
անպակասելի ։ Մշանջենաւոր է ՝ի կեալ քո ոչ յինքեան և վասն
իւր միայն , այլև վասն ամենեցուն հաւատացելոց նովաւ . վասն մարդ-
կան քահանայացաւ , և վասն մարդկան պահէ զքահանայութիւնն .
ոչ ՝ի տեղւոջէ սահմանի , ոչ ժամանակաւնուազի . ոչ ՝ի բազմապատիկ
պիտոյից , կամ ՝ի յանցուածոց մարդկան լքանի և տկարանայ առ
պաշտօնն . յերկինս գոլով ոչ նուազ միջնորդէ և պաշտպանէ՝ քան
մինչ յերկրի կայր ։

Բարեխօսելն քո ՝ի յերկինս քահանայապէս՝ պատշաճի նմա ըստ
մարդկութեան անօրինաբար , որպէս և քահանայութիւն . զոր և
ոսկեբերան ընդունի աստանօր . որ ՝ի հռովմայ . ը . 34. անյաւտուկ
իմանայր ըստ ածութեանն ։ Եւ թէպետ կարօղ ի քե ինքնին
իշխանութեամբ չնորհել զամ բարիս , սակայն ոչ արգելանի այսու
և աղաչանօք ընդունելն յայ մարդկաբար . և որպէս լամբրօնացին
ասէ ՝ի վերայ բնաբանիս՝ յառաջ բերել ՝ի մեկն . ոսղմ . ժէ . *
քանզի ինքն ի՝ որ առ ինքն վասն մեր բարեխօսէ , ՝ի փորձ էարչա-
րանաց մերոց մարմինն՝ առ ածութիւնն ։ Իսկ թէ բարեխօսել կամ
աղօթել քո՞ի այժմ յերկինս՝ զիա՞րդ իմանի , կամ ո՞րպէս չհակառակի
փառաց նորա , ասացեալմք ՝ի մեկնութեանն . հռովմայեցւոց . ը . 24.
՝ի մէջ բերեալ զայլևայլ ասացուածս վարդապետաց . յորս թէ անմիա-
բանութիւն ինչ երևիցի , առաւել ՝ի բանս ի՝ քան թէ ՝ի միտս ։
Վասն զի ամենեքին ընդունին՝ թէ քո նաև յերկինս ճանաչէ զամ
պետս հաւատացելոց . ցանկայ նոցա փրկութեանն , և այնմ հոգ

տարեալ, կամի զի չնորհեցէ ած զկարևորսն ամ. և զայսոսիկ առնէ իբրև քահանայապետ: Իսկ այսմ անմարթ է լինել առանց յատուկ և ճշմարիտ աղօթից. մինչ զի ոչինչ ընդդէմ է նաև զաղօթական բարբառս դնել 'ի քս, թէպէտ և առանց ցածուն հանգամանացն՝ զոր 'ի խոնարհ կեանս մարմնոյն կատարէր:

Մանաւանդ թէ քահանայապետական բարեխօսութիւն քան յերկինս՝ այնպէս կարևոր է, մինչ զի նմա ձգտեալ ածէ Պօղոս առաքեալ՝ և ոչ այլում: Եթէ քս միայն է ճշմարիտ և ինքնիշխան քահանայ նորոյ կտակիս, և է մշտնջենաւոր քահանայ նաև յերկինս, որպէս 'ի վեր և 'ի վայր հաստատէ առաքեալս, ապա հարկ է ոչ պատուով միայն՝ այլև արդեամբ ընծայել նմա զպաշտօնն քահանայական, որ է պատարագել և աղօթել. և զերկուսին միանգամայն կատարէ յերկինս, աղօթիւք զիւր ինքն պատարագ ընծայելով այ հօր: Եւ զի այսպիսի օրինակաւ աղօթել յերկինս՝ ոչ այլում ումեք պատշաճի, ապա քհի միայն յատուկ է ըստ իրաւանց պաշտամանն:

Զի այսպէս էոկ և վայել էր մեզ մեծ քահանայ,
սուրբ, անմեղ, անարատ, զատեալ 'ի մեղաւորսդ, և
բարձեալ ևան յերկինս. Եբր. 7.26:

'ի նկարագրել զանհամեմատ արժանաւորութիւնն քհի՝ ակնարկէ առաքեալ 'ի հանգամանս ահարոնեան քահանայապետին, զոր օրէնքն հրամայէին, լինել նմա անարատ 'ի մարմինն և 'ի հանդերձս և 'ի կերակուր, և յամուսնութեան, զատեալ արտաքին ճևովն յամ ժողովրդենէն, և յատուկ ուներլով 'ի տաճարին, ինքն միայն կարօղ մտանելոյ 'ի սրբութիւն սրբոց: Այսոքիկ օրինակաւ եւեթ սահմանելք 'ի քահանայապետ հնոյն, ճշմարտութեամբ 'ի քս միայն աւարտեցան:

Զի ոչ էիբէ 'ի ձեռաւգործ սրբութիւնսն եմուտ ած
ճշմարտութեանն, այլ 'ի բուն էոկ յերկինս՝ յանդիման
լինել էբեսացն այ վասն մեր: Եբրայեցւոց. 9. 24:

Զգերազանցութիւն պատարագին քհի առ օրինականսն՝ զոր յանցեալ տան ասաց, ցուցանէ 'ի վսեմութենէ տեղւոյն, և յեղանակէ մատուցմանն. առ խորանն մովսիսական և կամ առ տաճարն սաղոմոնեան՝ յոր մեծապէս պարծէին իսրայէլացիք, հանդէպ դնելով զբովանդակ երկինս. և զի ուր ահարոնեան քահանայն յանդիման տապանակին մտանէր, քն նմին իսկ երեսացն այ եղև մօտաւոր:

Ոչ եթէ ասէ՝ իբրև զղևտական քահանայապետն 'ի ձեռագործ սրբութիւնսն, կամ 'ի սրբարանն եմուտ ած. Լատինն միայն դնէ

22 Հունվարի.20:—Տեառնակուսին վէ բարեխօսուլթեն Գ[illegible]

ցն. յօրինակս ճշմարտութեանն. յոյնն և լատինն, և արաբացին դնեն, յօրինակս ճշմարտէցին. յորմէ և հայ օրինակք ինչ գրեն, ճշմարտիէցին: բայց քանզի ապ-ուխ-ա յոքնական ձայնիւ փոխան եզականի եդեալ է՝ նշանակիչ գերազանց սրբութեանն, ըստ նմին և բառն ճշմարտիցի՝ փոխան եզականի առեալ է. զոր և աստրին բացատրեալ ասէ. * ’ի ձեռագործ սրբարանն՝ որէ նմանութիւն ճշմարտին: || Վասն այսր մեր թարգմանս եզական եդ, յօրինակս ճշմարտութեանն. քանզի եմուտ քե ’ի ձեռագործ յայն սրբարանն՝ որ օրինակ էր ճշմարիտ սրբարանին երկնից, այնմ որ ցուցաւ մովսէսի, և հրամայեցաւ նմա առնել ըստ նմանութեան նորա. տես ել.Զ.5: Ա,յլ ’ի բուն էակ յերուսաղէմ: ’ի նոյն յածախերտ խորանն երկնային՝ յոր ոչ ոք ’ի մարդկանէ մտանել կարօղ էր, եմուտ քե, ոչ զի դադարեալ հանգչիցի ’ի քահանայապետութենէն. այլ յանդիման լինել երեսաց ած. ոչ և տապանակին, կամ քերովբէիցն՝ որք նմանութեամբ երևեցուցանէին զած, այլ բուն էութեանն այ լինել հպատուր, տեսութեամբ և ոչ առակաւ: Վասն ոչ, ոչ վասն իւր իբրև զքահանայն ղևւոացի, այլ վասն մեր ժողովրդեան իւրոյ. պատարագաւ մարմնոյն քաւելով զմեզ ’ի հաշտութիւն ընդ այ: Տես և է. 25: Ասա յաւելուածով դնէ յոյնն այժմ յանդիման լինել. զոր և ունի լատինն և արաբացին, այլ ոչ ասորին: Զիմաստասն թէոդորետոս բացատրէ, այժմ իբրև յանդիման լինել այ. զի այժմ մարդկութեամբն եւ յերկինս քե, ածութեամբն անընդմիջելի գոլով միշտ: կամ ըստ այլոց, այժմ և երևելով առաջի այ իբրև քահանայ և բարեխօս, և ոչ եթէ եթող զխնամս ժողովրդեան իւրոյ:

Զի ոչ է ած, և ոչ ոչինչ այ և հպատակն՝
հպատ յն ֆն: 1. Տիմոթէոսի. Զ. 5:

Ե՛ ոչ ոչինչ այ և հպատակն: կամեցեալ այ ’ի հաշտութիւն մեղուցեալ մարդկան կացուցանել միջնորդ հաշտեցուցիչ, ոչ բազումս այլ միջնորդս, այլ զմի միայն հաստարակաց ամենեցուն, և միջնորդ այնպիսի, որ և լինելոյն փրկիչ, որպէս ասէ ’ի յաջորդն: Ե՛ սա է հպատ յն ֆն: Այսպէս առանց յօդի գրելի է հպատ, և ոչ մարդն. քանզի և յոյնն անյօդ դնէ՝ անթրոպոս: Ոչ կան բազում միջնորդք ընդ ած և ընդ մարդ, որպէս զի մին այսմ ազգի կամ գաւառի լինելոյն հաշտարար, և միւսն՝ այլոց ազգաց և գաւառաց, այլ միայն սահմանեալ այ. և եթէ սա ոմանց և եթ կամէր լինել խաղաղարար, այլոց ո՞ արդեօք կանամ տանելոյ էր միջնորդութեան և հաշտութեան: Ապա ուրեմն մին այն վասն ամենեցուն միջնորդեաց. և այն էին կամքն այ՝ որ կարդեաց զնա միջնորդ:

Ե՛ դարձեալ. այս միջնորդ է հպատ յն ֆն. յոյնն և լատինն,

ֆա յա. բայց յունականս ինչ, յասորին և յարաբ. յա ֆա: Ընկալաւ
յինքն զբնութիւն որ հասարակաց ֆ ամ մարդոյ. ապա հասարակաց
ամենեցուն հոգացաւ զմիջնորդութիւն. և ոչ այսմ և այնմ, զայլովքն
անփոյթ արարեալ: Ըստ ասացելոցս՝ կրկնակ պատճառ նշանակի աստանօր
՚ի ցուցանել զկամս այ ՚ի փրկութիւն ամ մարդկան. քր ՚ի միութենէ
միջնորդին, և ՚ի լինելոյ նորա համագոյ ամ մարդկան:

Միջնորդ ասի քր արձակաբար և տիրապէս. իբր զի ոչ միայն
աղաչանօք բարեխօսէ, այլև իւրովք վաստակօք շահի զհաշտութիւն
մարդկան ընդ այ. ինքն անընդ միջնաբար մատուցեալ առ ած, ընդ-
ունի և ընծրհէ մարդկան զամ շնորհս և զպարգևս կարևորս ՚ի փրկու-
թիւն ոչ ոք ատանց նորա Տապէի առ ած *, այլ ամ ոք, և ամ
հայցուածք ՚ի ձեռն նորա մատչին յընդունելութիւն այ: Այսպիսի
միջնորդ ասի ոչ, բացբարձմամբ այլոց միջնորդաց. քր բաց ՚ի նմանէ
ոչ միայն ոչ գոյ, այլ՝ չէուէ լինել այլ միջնորդ. որպէս և յասելն
ոչ ած, արտաքս հանէ զայլ ած: Եւ հարկ իսկ է այսպէս լինել.
վասն զի միջնորդն արդեամբք հաշտարար մարդկան ընդ այ՝ պարտի
յինքն շաղկապել զխռովեալ կողմանն, կամ ըստ ոսկեբերանին՝
պարտի հասարակ ինքեան առնել զնոսա՝ որոց կացեալէ միջնորդ.
ուստի իրաւապէս հաղորդ լինել ածութեանն և մարդկութեան,
միջին ընդ երկուս բնութիւնսն. որպէս զի իբրև ած՝ կարիցէ
արժանապէս գործել զհաշտութիւն, վճարելով զյանցանսն. և
իբրև մարդ՝ կարիցէ կրել զպատուհասն: Ապա իսկութիւն այսպիսի
միջնորդի պատշաճի այնմ միայն, որ իցէ ած՝ միանգամայն և մարդ,
կամ համագոյակից այ և մարդոյ, որ քր ի միայն յատուկ է:

Ոսկեբերան այլով եղանակաւ և բացատրէ զայս ասելով. մարդ
սոսկ ոչ լինէր միջնորդ, զի ընդ ած խօսել ունէր. և ոչ ած
լինէր միջնորդ, զի այլք ոչ ընդունէին, քր աներևոյթ գոլով
՚ի մարդկանէ: Որում զհետ գայ՝ զի երկաքանչիւր բնութեանց
հաղորդեացի. որպէս զի իբրև ած խօսեացի ընդ այ, և իբրև մարդ՝
երևեացի մարդկան: . . . * Յովհ. 14. 6:

Ըստ ասացելոցս միաբանին ամ վարդապետք և մեկնիչք, թէ
պաշտօն միջնորդի պատշաճի քր ոչ ըստ սոսկ ածութեանն. և ոչ
ըստ մարդկութեանն. այլ միաւորեալ էմմանուէլին. վասն այն
զանօրինական անուանսն եղ առաքեալ, Տուէ յա ֆա: Եւ խորհրդով
ասաց՝ միջնորդ այ և Տուէկան, յառաջ կարգեալ զանուն այ. վասն զի
զայսպիսի միջնորդ ինքն ած հոգացաւ նախ իւրով ամենիմաստ
բարերարութեամբ. ինքն նախ առաքեաց զածորդին առ ՚ի միա-
ւորիլ ընդ մարդկութեան. որ յառաջն ած էր, եղև մարդ. ածն
՚ի մարդկանէ անարգեալ՝ եղև առաջին ՚ի սահմանել զհաշտութիւն.
իսկ մարդիկ եղեն յետինք և դանդաղք ՚ի խնդրել զնոյն, և
՚ի ճանաչել զճշմարիտ միջնորդն:

Խնդիր առնեն ոմանք յածախանից, թէ պաշտօն միջնորդի էցէ արդեօք տուեալ քսի պարզաբար զօրութեամբ անձնաւորական միաւորութեանն, թէ յառանձինն կարգմանէն այ:

Համառօտ բանիւ զանազանելի Ի այսպէս. եթէ մարդեղութեանն խորհուրդ մտածեցի ըստ ինքեան՝ հրաժարեցուցեալ յայժմու պարագայիցն, ըստ այմ բան միջնորդի չէ հարկաւ կապակցեալ ընդ անձնաւորական միաւորութեան. մինչ զի կարէր աճ լինել մարդ՝ առանց լինելոյ միջնորդ այ և մարդկան: Բայց քանզի ըստ այժմու վճռոյ կամացն այ՝ մարդեղութիւնն սահմանեալ Ի առ՚ի փրկութիւն մարդկան. ըստ այմ նովին իսկ անձնաւորական միաւորութեամբն, կամ որ նոյն Ի՝ այ մարդ լինելովն՝ կացուցաւ միջնորդ և փրկիչ՝ առանց այլոյ կարգաւորութեան. զոր և բանք գրոց յայտ առնեն. որպէս յասելն. * Զի ոչ առաքեաց աճ զորդի իւր՝ թէ դատեսցի զաշխարհ, այլ զի փրկեսցի աշխարհ նովաւ: || Յովհ. ե.17: Եւ առաքելոյ ասելն. * Աճ զորդին իւր առաքեաց՝ի նմանութիւն մարմնոյ մեղաց, և վասն մեղաց: || Հռովհ. ը.3: Յորս ակնարկել նշանակէ զմիաւորել ընդ մարդկային բնութեան: Իսկ եթէ ոմանք զմասնաւոր կարգումն համարին ցուցանել բանիւն առ Եբրայ. Ե.5. թէ քա՛ ոչ անձին շուք եղ լինել քահանայապետ, այլ որ խօսեցաւն առ նա՝ որդի իմ ես դու և այլն, այս առաւել հաստատ զասացեալն մեր. վասն զի խօսելն այ հօր առ որդի՝ Ի սահմանեալն զմարդանալ նորա:

Ու էս գանձն ֆէչանս ընդ ամենեցուն,
վէհայուքէն ժամանակաց էութ:

1. Տիմոթէոսի.2. 6:

Յայտ առնէ զպատճառ և զհինն միջնորդութեանն քսի, որ Ի լինելն փրկիչ: Ու էս գանձն ֆէչանս. ոչ յակամայս և յիւրոց պարտեաց մատնեալ, այլ ինքնին կամաւ մատոյց զանձն ըստ հրամանին այ հօր. զի էր աճ՝ անմահ էր և անբռնադատելի. և էր մարդ՝ անմեղ և անպարտ. ապա ինքնակամ պարտաւորեալ, ետ ոչ զօտարս ինչ՚ի փրկանս, և ոչ յայլմէ մատուցեալ, այլ զիւր անձն իւրովի տալով՚ի փրկանս. լեալ միանգամայն քահանայապետ և պատարագ պարտապան և պարտք:

Փչչանի՛ ասի գինն ազատութեան պարտաւորի ուրուք կամ գերոյ. և ճշդիւ առեալ նշանակէ զփոխանակաւ հատասար վճարումն, այնչափ ինչ և զայն տալ, որ ինչ անկ էր փրկանաւորին կամ ազատեցելոյն, անձն ընդ անձին, կամ գլուխ ընդ գլխոյ և այլն. զոր և ճշգրտելով ծանուցանէ առաքեալ յասելն, քա՛ գնեաց յանիծից օրինացաց, կամ զորս ընդ օրինօքն, լինելով անէծք և ընդ օրինօք: Գաղատ.

գ.13. դ.4. 5: Այնպէս մարդկան պարտաւոր գոլով ՚ի տանջանս. և ՚ի մահ վասն մեղաց, յինքն փոխանակեաց քե զայս ամ, բովանդակ վճարելով արդարութեանն ամ: Եւ զայն ընդ ամենայնի. վասն ամ մարդկան ըստ բաւականութեանն՝ որչափ կարօղն էր յիւրն կողմանէ, և առաւել քան զպէտսն վճարեալ վասն ամենեցուն. Թէպէտ և ըստ կատարմանն ոչ ամենեքին ազատին. տես ՚ի 4 գան: Արդ՝ այսպիսի փրկագործութեամբ ընկալաւ քե զմիջնորդն լինել ընդ ած և ընդ մարդ և ոչպէս նա ոգայն էր՝ նոյնպէս ոգայնակ ջնորդ. և զոր օրինակ մահուամբն փրկեաց, նմանապէս զպատարագ մահուն ընծայելով ամ, կատարէ զհաշտարար միջնորդութիւնն:

ՎէհայուԹիւն ժամանակայ է-ւոյ: (մի օրին. վէհայուԹեամբ:) Ասելն ժամանակայ է-ւոյ ոչ է իմանալի ՚ի սեռական հոլով, այլ ՚ի գործական, զոր ստորև ՚ի ներգոյական հոլով բացատրէ մեր Թարգմանս, ՚ի յիւր ժամանակս, նոյն գոլով յունականին: գ.15: Իսկ զյարմարութիւն բանիս այլևայլ օրինակաւ առնուն. ոմանք առանց յաւելուածոյ ինչ յարեն յանցեալն այսպէս. քե եւ զանձն փրկանս ընդ ամենեցուն՝ վկայութիւն կամ ՚ի վկայութիւն յիւր ժամանակս. եղեալ վկայութիւն կամ վկայ ՚կ սահմանեալ ժամանակն, յայն դէպ ժամանակս որ յայ կարգեալ էին, և ՚ի մարգարէից նախագուշակեալ, զոր այլուր ասէ՝ լրումն ժամանակաց: Գաղատ: գ. 4. եփես: ա. 10: . . .

Իսկ ըստ իմաստիցն՝ վէհայուԹիւն իմանան ոմանք զքե, և այլք զչարչարանս քե՛ի, կամ զփրկանն, և զերկոսին յիրաւի միացուցանէ ոկեբերան: ՃաոՀ է: Բայց և այս կրկնակի առեալ է. ՚ի իբր կրաւորաբար՝այն զորմէ լեալէ վկայութիւն. և իբր ներգործաբար՝ այն որ վկայէ, կամ վկայեաց: Ըստ առաջնոյն իմանի. քե եւ զանձն ըստ ամենեցուն փրկանս, այն որ վկայեալ է յիւրում ժամանակի, կամ յիւրաքանչիւր ժամանակս առ յայ ՚ի ձեռն մարգարէից. զորմէ և ած հայր վկայեաց յերկնից Մաա,17. 5: Յովհ. 12. 28: և մկրտիչն Յովհաննէս. Յովհ.1. 7. 29. 33. ամենեքին վկայեցին Գոգ.10. 43. զքե է լինել չարչարանօքն փրկանք աշխարհի .1 Յովհ. 2. 2. հրաւիրօղ, միջնորդ հրէից և հեթանոսաց առ ած. և քե զհայր զառաքիչ իւր՝ կոչէ վկայ անձինն. Յովհ. ը. 16. 18: և սբն պետրոս ասէ յառաջնում ԹղԹի. ա. 11. Թէ հոգին քե՛ի գուշակեր ՚ի մարգարէսն, նախ զչարչարանաց քե՛ի վկայելով, և ապա զփառացն:

Ըստ երկրորդին՝ վկայութիւն իմացեալ զքե չարչարեալ, ՚ի մատուցեալն են: Քե ամենեցուն վասն եւ զանձն փրկանս՝ որ վկայութիւնն է, կամ եղև վկայ իւրովք չարչարանօքն. վկայեաց ճշմարտութեանն ամ, Թէ որդի է ամ առաքեալ ՚ի հօրէ, Յովհ. 6. 29. 39. զի հաւատարմացուսցէ զխոստմունս ամ. վկայեաց կամացն ամ ՚ի փրկել

ղամ մարդ Յովհ. 6.40: անքաւ բարեգթութեան նորա՝ի ներել ամենեցուն, արդարութեան նորա՝ի պատուհասել զմեղս: Զայսպիսի վկայութիւն արտրեալ քանիւք սքանչելեօք, յետ ամի կնքեաց մահուամբ իւրով՝ի կարգեալ ժամանակին ըստ գուշակութեան մարգարէից: Մեծ ևս վկայութիւն աներկբայելի անմարթ է լինել՝ քան զոր քե մահուամբն ստորագրեաց: Ըստ այսոցիկ քե կոչեցաւ՝ վկայ հաւատարիմ, ՚ի յայտն. ա. 5. գ. 14. և ՚ի սոյն կցորդի ասացեալն ՚ի Թզթիս. գ. 13. * ||ր վկայեաց առաջի պոնտացւոյ պիղատոսի զբարւոք դաւանութիւնն: || Զերկաքանչիւր միտս՝ի մէջ բերէ ոսկեբերան և այլք. և Թէոդորեատոս յաւելու՝ զչարչարանս քե՝ի կոչել վկայութիւն, եբր զի ցուցանէ զանիրաւութիւն մահուն, անպարտ կրեալ՝ի թըշնամեաց անտի: (Գոլ. 2. 23:)

Այլ ոմանք վէյօ-ըի-ն իմանան զաւետարանն, կամ զքարոզութիւն նորա. իբրև Թէ քե տուեալ զանձն վասն ամենեցուն փրկութեան՝ վկայի քարոզութեամբ աւետարանին. որով հաստատի Ճշմարտութիւն անձին նորա, պաշտամանն և երախտեացն. այս յառաջն լռեալ գոլով, կատարեցաւ յիւրում ժամանակին, և ամ ուրեք վկայեալ քարոզի առ՝ի յոյս ամենեցուն. որոյ վասն աղօթել արժան է յեկեղեցիս վասն փրկութեան ամենեցուն: պե՛ս էյե՛ս. 164. 167. 208. 424. 426. ՚ի Մէյնո-ըի-ն Թողեոց պօղոսէ Հպոլ. գ. պպեալ՝ի վենէպէլ. 1812:

Վասն բարեխօսութեան քե՛ի. ինչ ինչ որ Նոեմբեր. 19. տետրակի. 26. երեսուին սուրբ Աւետարանիցն օրինակեալ տպվելէ. անդ ՚ի նոյն տետրակուին էլ տեղ չունաց. որ նոցա մեկնութիւններն հայ հեղինակաց գրքերիցն օրինակվեր և տպվեր: վասնորոյ որչափ որ այժմ կարևոր ելավ օրինակվեց և աստ վերևուին տպվեց. որ ամեն հայևար կարդացօղ տեսնի, որ քե մի միայն է բարեխօս վասն մեր. այլ ոչ ոք:

